

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՄԻ ԹՈՒՂԹՆ

ԱՌ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐԸ.

(Շարունակութիւն):

Միւս յօդուածը բազմաթիւ վկայութիւններ է պարունակում եկեղեցու հայրերի գրուածներէից՝ ի հաստատութիւն Հայոց եկեղեցու աւանդութեանց ճշմարտութեան: Յօդուածի այդ մասն, որ մեզ համար էական չէ, բաց թողնելով, դնենք այստեղ միայն նորա վերջն, որ դարձեալ ընդհանուր դատողութիւններ է պարունակում այդ խառն ժամանակի շփոթութեանց վրայ:

Ահա այդ կտորը:

«Այլ մեր զբանս զայսոսիկ երկարել վասն մերոյս գրոհի է, զի զբազումն տեսանեմք միտել յայլոց սովորութիւն, ոմանք տգիտաբար և կէսք վասն փառաց և այլք վասն որովայնի և հեշտութեան, զի զսլաքն լուծանեն այնպիսիքն և մեղաց խտրումն ոչ ունին. այնպիսիքն ընթանան զկնի նոցին, զորոց յանդիմանութիւն առաքեալ հրապարակագոյժ առնէ ի գիրս իւր, որոց Աստուած որովայնքն իւրեանց, է ասէ, և փառք ամօթն իւրեանց: Եւ իմ տեսեալ զազգիս իմոյ տարտամութիւն և զգիւրամէտ խոտորումն, որպէս հնոյն Իսրայէլի և յոյժ վշտանամ: Իւրաքանչիւր ազգ յիւրեանց ստութեան կամքն հաստատուն կան և զչափ մաղի միոյ չկամին թուլանալ, և մերս որ գրոց վկայութեամբ զճշմարիտն ունին՝ տարաբերին, ոչ գիտեմ թէ յազգիս

թուլութենէ է, թէ յոչ միամբանութենէ: Վասն հնոյն խորայէլի ասէ թէ՝ ել անօրէնութիւն ի Բաբելոնի ծերոց և թէ քահանայք միաբանեցին ի չարիս: Իսկ ի նորումս ասել պարտ է թէ առաջնորդք մուրեցան և մուրեցուցին՝ զորս կարացին. բայց ըստ սրբոց լուսաւորչացն մերոց խնդրուածոց ակն ունիմք թէ երազ երազ արմատաքի խլի աղանդս այս: Իսկ ես փոքր իշատէ ժողովեցի զբանքս սրբոցն, որ սակս այսորիկ վասն պարզամտաց, զի մի գայթազգեացին. թէպէտ ոմանք ընկալցին և ոմանք արմարհեցին. իւրաքանչիւր ոք յիւր միտսն հաճեցի, զի անձնիշխան կամք շնորհեալ է յԱրարչէն մարդկայինս բնութեան: Այլ մեզ եղիցի յողորմութենէն Աստուծոյ յօրէնս տեառն խորհել միշտ ի ասէ և ի գիշերի և զցանկ ս. հարցն ոչ պատառել, զի մի օձահար լինիցիմք: Այլ և մեզ ամենեցուն պարտ է միշտ զմտաւ ածել, թէ այժմեան ժամանակիս ծնունդք՝ քան զառաջինսն ոչ սրբագոյնք են, ոչ գիտութեամբ առաւելեալք, նոցին բանից պարտ է հնազանդել մեզ և ըստ նոցին հրամանաց գնալ, զի մի լիցի փոքր իշատէ կուրութիւն խորայէլի: Զի որպէս իշատխօսութենէ՝ ծաղրածութիւն, և անտի խեղկատակութիւն և ի նմանէ պոռնկութիւն, այսպէս փոքր փոքր լինի պատուիրանացն Աստուծոյ արհամարհանք և խրամատութիւն, զի որ ի փոքրէն ոչ զգուշանայ՝ զմեծն ոչ կարէ խտրել: Սակս այսորիկ եկին հասին յայժմեան ժամանակի մեծագունիս այս խրամատութիւն, որ է խորհուրդ փրկական մարմնոյ և արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Թողից ասել զոռնհարութիւն բազմաց, զի որ կարի վատթարագոյնք են՝ ծաղր առնեն ասելով. «ահա յայտնի եղև՝ որ մինչև ցայժմ մուրեալ էիք, և այժմ դեռ ածին զձեզ ի հաւատ և դուք տակաւին յամառիք: Աւարդ որ միտս ունի՝ կարէ իմանալ և ընտրել՝ թէ նոցին բանիցն պարտ է հաւատալ, որ հոգիւնկալ և սքանչելագործքն էին, թէ սոցա որ մեռելոտի գործովք վարին՝ գայթազգեալք և գայթազգեցուցիչք: Այլ այժմ բանիս աւարտումն արասցուք, զի զգարչելիսն ծածկելն է բարիոք, քան թէ յայտնել միայն մարդասէրն Աստուած գթասցի ի գինս արեան իւրոյ և խաղաղացու-

ցէ գեկեղեցի իւր, և ինքն եղիցի օրհնեալ յաւիտեանս։ Թէ ոյք են այդ յօգուածների քաջախրոխտ հեղինակները, գրչագրից չէ իմացումս սակայն ըստ երևոյթին դոքա տարբեր անձինք չեն։ Նախկին յօգուածի վերջում յաւելուածը ցոյց է տալիս պարզապէս, որ ազգային եկեղեցու այդ ախոյեանները բաւական հզօր են եղել, թէպէտև մեծ ջանքեր են գործ դրել որ կարեցել են պետական զօրութեան դէմ գործել։ Նոքա առաջնորդուել են մի գաղափարով, որ ստուծիւնը չի կարող բնաւ յարատեւութիւն ունենալ, նա միայն կարէ ժամանակ մի բռնութեան օգնութեամբ տիրապետող հանդիսանալ, սակայն վաղ թէ ուշ պէտք է ընկնի։ Հարկաւ այդ անձինք խելամուտ չեն եղած պատմութեան ընթացքի պատճառականութեան և անշուշտ չգիտէին, որ ստուծեամբ չի կարող ոչ ոք երկարատեւ պատիւ վայելել, հաստատութեան արմատներ բռնել, չգիտէին որ պատմութեան վրէժխնդրութիւնն անխուսափելի է, ըստ որում նորան հակառակ ընթացողը կհանդիպի սոսկալի վրէժխնդրութեան, սակայն այդ ազնիւ անձինք հաւատով էին ապրում և համոզւած էին, որ բարոյական աշխարհում էին շնչում, վասնորոյ և ճշմարտութեան դէմ մեղանշողը պէտք է վերջ ի վերջոյ տուժէր։ Եւ ահա տեսնում ենք որ դոքա ջանում էին իրերի վիճակի մասին տեղեկութիւն աւանդել ապագաներին, ցոյց տալ թէ ինչ են եղել և ինչ էին ուզում ոմանք եղածը դարձնել։

Կան մարդիկ, որոնք պատրաստի ինչ տեսնելով, կարծում են թէ մէկ վարկաբարձի հօղմէ յառաջացրել այդ, և թէ կարելի է ըստ քմահաճութեան ուղածը փոխել և կարճատես աչքերին գլխիվայր երևեցածներն՝ անհատական բաղկի մի զօրութեամբ արմատից հանել և գլուխնիւր տնկել։ Բայց քանի սխալւում են այդպիսիները, սխալւում են, չարաչար սխալմունքով, վասնորոյ և այդպիսիները պէտք է պատրաստ մնան պատիժը կրելու։ Եւ իրաւ ժամանակն այն է յառաջացնում ինչ որ պահանջւում է, նորա դէմ ելնել չի լինիլ, և ուլ ելնէ, նա պատմական իրաւութեանց պտոյտի ժամանակ կնետուի անհուն խորխորատի մէջ և նորա կորուստն անդառնալի կլինի։ Պատմութեան պահանջն է

որ քաղաքակրթութեան այն էական արդիւնքներն, որոնք յառաջ են բերուել անցեալ սերունդներէց, մէկ դարից միւս դարին աւանդուի. ասում է ֆոն Ռանկէ հռչակաւոր պատմաբանը: Այդ ճշմարտութեան դէմ գործել չի լինիլ առանց սլատփուելու: Կարծես թէ այս գիտէր փոփոխամիտն Հեթում, որ «խզողներ» էր առաքում վանքերն, իւր գործունէութեան արձանագրութիւններն ոչնչացնելու, և գուցէ իւր խելագարութեան անվէհեր մունետիկների բերանը զսպելու: Բայց սխալուեց Հեթում, չարաչար սխալուեց. ստույգիւր ստույգեամբ ծածկել՝ անհնարին է «խզողներն» ունիչ օգտեցին և նկուն եղև սատանայ: Եթէ Հեթում առժամանակ յաղթէր, դարձեալ օգուտ չպիտի ունենար, զի «յաղթութիւն տանելը հեշտ է, բայց նորա հետեւանքներն ամրացնել, այդ է դժուար» ասում է Ռանկէ: Հեթում գուցէ յաղթեց, բայց միթէ իրաւ յաղթանակ էր նորա յաղթանակը:

Հեթում իւր ոտանաւոր յուշագրութեան մէջ, այլ կերպով է պատմում եղելութիւնը, ցոյց տալով որ մէկ ժողովական կարգադրութեամբ է զատիկ օրը փոխուել: Մնազատիկ (ծուռ զատիկ) վրայ կաշխատենք մի այլ անգամ խօսել, բաւական է յիշել որ 95 տարին մի անգամ Հայոց և Յունաց զատիկները չեն հանդիպում իրար: Հայք չեն պահանջել, որ օտարներն իւրեանց նման տօնեն, սակայն վերջինները համբերատարութիւն չեն ունեցել և խռովութեանց տեղիք են տուել, և ահա այդ առիթ է եղել պատմական դէպքերի, այն էլ այն քաղաքներում, որտեղ բազմազգի բրիտաններ էին բնակւում, որպէս Երուսաղէմում, Եդեսիայում և մանաւանդ Կիլիկիայում: Առաջին ճառատիկը պատահել է 1007-ին Յունաց մի նոր տումարի կարգադրութեան ժամանակից ¹⁾ Իսկ ապա 1102-ին ²⁾, 1197-ին և Հեթումի ժամանակ 1292-ին: Այնուհետև պատահել են 1387-ին և այլն, և պիտի վերստին հանդիպի 1819-ին, ինչպէս որ եղել է 1824-ին:

1) Մատթէոս Ուսայեցի, Երուսաղէմ 1869, էջ 52, Անանիայ Շիրակացի, Մնացորդք բանից, Պետերբուրգ, 1877, էջ 21—26:

2) Անդ. էջ 353, Այս նկատմամբ ունիմ ժողոված՝ թղթեր և այլ տեղեկութիւններ, որոնք ի դէպ կհրատարակուին:

Հեթումի օրով ծաղաղակի կարգադրութիւնը նոր էր Հայոց համար և չէր կարող հաճութիւն գտնել, մանաւանդ որ Գրիգոր Վկայասէր երկրորդ ծաղաղակի ժամանակ խիստ անվեհերութեամբ էր գուրս եկել ի պաշտպանութիւն Հայոց տօնակատարութեան, նորա քաջախորխոր թուղթն ևս կար Ուռհայեցու պատմութեան մէջ: Հեթում շեշտակի էր գնում պատմութեան գէտ և կարծում էր որ իւր բարձր գիրքով կարէր իւր ստորագրեալների գլխին ստութիւն կապել: Յիշածս յուշագրութեան մէջ Հեթում նախապէս ողբում է իւր մեղքերն ասելով,

«Ար ծառայեալս եմ բիւր ախաից,

կապեալ տողամբ չար շղթայից:

Առ ի մեղաց գոլով տիրեալ,

եւ ներհակաց ներքոյ անկեալ:

Յիս յարձակմունքն անասնական

իշխեն մտացս բանական:

Եւ ըստ նեխեալ գերեզմանին,

Բռով արտաքոյքս իմ պաճուճին:

Հեթում անուամբ լոկ թագաւոր,

Ներքոյ աղքատ և պարտաւոր:

Քանզի կոչիմ իշխան Հայոց,

Բայց ես իշխեմ յախտից իմոց»¹⁾:

Այսպիսի խօսքերից չէ կարելի հետեւցնել, որ Հեթում ճշմարիտ բարեպաշտութիւն ունենար, գոնէ նա այն երկիւղածութեամբ չէ վարւում եկեղեցական գործերի հետ: Չատկի կարգադրութիւնն ինքն է արել, ինչպէս երեւում է թէ պատմիչների մեծ մասից և թէ վերեւ բերուած յօդուածներից: Իսկ Հեթումի պատմաճն է այս.

«Պատմեմ և այլ ինչ յեշելի,

ի մերս եղեալ ժամանակի:

1) «Արարատ». 1869. էջ. 40—41.

Պատմել որդւոց ձեր զկնի,
 Ի յօրինակ ըզգուշալի:
 Զքառասուն և մի թուի,
 Որ ընդ եօթեանցն է հարիւրի:
 Եղև ոմանց յամառութիւն,
 Ի սուրբ զատկէն մոլորութիւն:
 Որք և ամօթ չհամարէին,
 Զի ընդ նետորսն դասէին,
 Եւ լընդհանուր եկեղեցւոյ, չ
 Պատառէին յախտ հերձուածոյ:
 Քանզի զվեց ապրիէլին,
 Որ ճշմարիտ էր օր զատկին:
 Ի բաց թողուլ բաջաղէին,
 Զերեքոտասան օրն ընտրէին:
 Իսկ մեք զուղիղն դատեցաք,
 Լինիլ ժողով յօժարեցաք:
 Քննել զգիրս աղաչեցաք,
 Եւ զոր ստուգի յանձին կալաք:
 Յայնժամ եկեալ ի միասին,
 Հանուր լրմամբ եկեղեցին:
 Զաստուածաշունչ գիրս քննեցին,
 Զբանս սուրբ հարցն ի մէջ ածին:
 Եւ անգստին ճշգրտեցաւ,
 Արդարութիւն խնդրոյն ցուցաւ:
 Որով հրաման կանոնեցաւ,
 Տօնել ի վեցն հաւաստեալ:

Այսպէս է հաղորդում Հեթում, բայց հասկանալի է որ այդ-
 պէս հեշտութեամբ չէ անցել ամենն, և թէ այդպիսի օրինական
 ճանապարհով չէ հասել իւր նպատակին: Նա իւր կարգադրու-
 թեան մէջ՝ կարծել է թէ կարող պիտի լինէր՝ միացնել բոլոր
 քրիստոնէից, և այդ եղած է առաջին փորձ.

«Յորում բոլոր ազգք որ ի նոյն»

Միաբանեալ եղեն ուղղոյն»:

Հեթումի մոլորութեան պատճառը նորա թիւր կարծիքն է, որ իբր թէ քրիստոնէական եկեղեցին մի ընդհանուր եկեղեցի պիտի կազմէր ըստ ամենայնի միանման: Այս հետեանք է իւր նախորդների, որոնք ձգտում էին՝ առանց եկեղեցեաց մէջ փոփոխութիւն մտցնելու, սէր հաստատել քրիստոնեաների մէջ և ստիպել որ իրար ճշմարիտ քրիստոնեայ ճանաչեն. այդ չյաջողուեց, բայց տուաւ այլ գաղափարներ, որոնք պիտի այդ նպատակի համար ծայրահեղ միջոցներ գործադրել տային, փոքրիկ նպատակների համար մեծ միջոցներ զոհող թեթևամիտներին: Այսպիսով զգոյշ քայլն անզգոյշ արշաւանքների պատճառ եղաւ և մինչև այժմ եղաւ մտածող որ ամենայն եկեղեցի մասնաւոր է և միաժամանակ ընդհանուր կամ ընդհանրական¹⁾, տեսանելի և միաժամանակ անտեսանելի, և թէ իւրաքանչիւր եկեղեցի պէտք է կատարելապէս ազգային լինի, որ կարենայ իւր հաւատացեալոց փրկութեան ծառայել: Ինչ և իցէ. Հեթումը կատարեց իւր կամեցածը. եղելութեան հանգամանքները կամ հետեանքները նկարագրում է մեր անանուն յիշատակագիրն, որի ասածները բոլորովին հակառակ են Հեթումի մեղսական անմեղաբանութեան:

Յիշատակագիրը խիստ ազատամիտ է երևում ինչպէս արտայայտւում է նորա խօսքերի մէջ. «Եւ արդ վասն զի անձնիշխան է մարդ, և իւրաքանչիւր ոք ի կամս իւր հաճեցի, և որք թիւրեցին յուզղոյն ինքեանք ծանխցին»: Նա ուրիշի կարծիքը բացարձակապէս չէ դատապարտում, վասն զի այդ ուրիշը մէկ թագաւոր է. և բայց և այնպէս պարտք է համարում չղաւաճանել իւր համոզմունքին և աւանդում է եղելութիւնը հետագաներին, զի թէ գոյլելի է գործն զոր առնեն, ապա մեք պատուոյ և մեծարանայ եղաք արժանի. զի զգոյլութիւնս ինքեանց արժանացուցաք. և եղաք նոցին Ագաթանգեղոս և գրեցաք զգործըս նոցա: Իսկ թէ նախատանայ արժանի է՝ զոր գործեն, ընդէր յամառեն և զստութիւն իբրեւ զճմարտութիւն իրաւացու-

1) Տես. և «Արարատ»-ի անցեալ համարը. էջ 966:

ցաննն»։ Այստեղից պարզ երևում է, որ հակառակորդներն ոչ միայն կարգադրել են միանգամայն և յետոյ (երևի 1293 ին) իւրեանց ս'ալը չեն կամեցել ուղղել, և մինչև անգամ գրաւոր ջառագործութիւնների միջոցով ջանացել են արդարացնել ինքեանց, ինչպէս ասում է. «այլ նոքա զիւրեանցն գրեացեն»... Ի գիտէ՝ հէնց Հեթումի գրութիւնն ևս այդ «զիւրեանց»-ների մէջ չէ։

Ինչպէս երևում է յօդուածագրի հաղորդածից, եղելութիւնը ծանր կերպարանք է ստացել։ «Ի տանէ բուսաւ թշուառութիւն» խօսքերը կարելի է գրել՝ Հայոց գլխին եկած գրեթէ բոլոր դժբախտութեանց նկարագրութեան սկզբին։ «Ազգս Հայոց պատառեալ ի միմեանց յերկուս բաժանեցան», ասում է նա, և այդ բաժանումն ոչ թէ գաղափարի համար է եղած, այլ լոկ քմահաճութեան։ Այստեղ բռնութիւն էին գործ դնում, վասն զի այդ անգամ «օրէնսդիր արտարինք էին եկեղեցւոյ՝ և ոչ ներքինք»։ Բռնութեամբ և բռնահարութեամբ էր կարելի «արտաքին» կարգադրութիւնը «ներքին» կեանքում յառաջ տանել, և այդ ստութիւն կատարում էին «ամանք տգիտաբար» և կէսք վասն սպառնալեաց։ Սակայն տեսնում ենք՝ որ ոչ տգիտութիւնն և ոչ սպառնալիքը՝ չեն կարենում մնորութիւնը համոզմունք դարձնել ընդհանրութեան մէջ. «գրեթէ խղճիւ ունէին զթիւրն» կամք ամենեցուն յուղիղն փութայր»...։ Այս նկատմամբ պէտք է լաւ ուշադրութիւն դարձնել հետեւեալ խօսքերի վրայ, թէ «Յոլովք թաքնաբար ունէին զճմարտութիւն, և սակաւք այնոքիկ, որք յայտնի և համարձակ կարացին խոտովանել» և թէ «էին որք թելագիր լինէին թաքուն ունել զճմարտութիւնն, և յայտնի ոչ խոտովանել»։ Ըստ որում բռնութիւնը կմնայ միշտ բռնութիւն և չի կարող նպատակի հասնել, մինչև անգամ բռնութեան բազուկը կկտորուի, կփշրուի, բայց ճմարտութեան եղէգն և ոչ երբէք։ Հեթումի գահն այդ բազուկն էր, որ բռնանալու համար այնքան լարեց իւր ջղերը, մինչև որ վերջապէս պայթեցաւ։

«Եւ էր յայտն վայրի տեսանել զոմանս խղճատանջ եղեալ. զի ոչ կարէին մատնել զճմարտութիւնն։ Վասնորոյ հա-

լէին և հառաչէին աւաղելով զբերումն ժամանակին ստգտանելով զսրտահոսումն ինքեանց այնր դիպուածոց: Բայց դեռ այս բաւական չէր, այլ աւելին կայ. ստարակուսէին վասն ելից իրանցըն, և փափագէին յայտնի հալածչաց օտարաց, քան թէ այնպիսեացն մերոց, որք ստույթեան իբր ճշմարտութեան ջատագով լինէին դիմադրութեան հանդիպեալ վշտանալով: Այսպէս էր Հեթումի բրիլը քանդում իւր գահի տակը. այսպէս էր վարձատրում այն անձանց, որոնք այնքան անձնուիրութեամբ փառաբանում էին այդ թագաւորութիւնն. այդպիսի երկիւղածութեամբ էր վերաբերում դէպի այն կրթարանն, որից ելնողները հոգով սրտով նուիրւում էին Ռուբինեանց բարեկեցութեան: Ուստի և նոքա, որոնք ամեն ինչում հնազանդում էին այդ գահին, ճշմարտութեան համար աւելի սիրով փափագէին յայտնի հալածչաց օտարաց (էջ. 965):

Ահա երկու կողմեր, որոնցից իւրաքանչիւրն ինքեան արդար է ուզում համարել, սակայն մէկը հրապարակապէս ոչինչ չէ խնայում իւր նպատակին հասնելու, իսկ միւսը մասամբ ընդդիմադրում է և մասամբ լռիկ իւր գաղափարին հաւատարիմ մընում: գիտենալով որ էականը գործն է և ոչ թէ թեթեւոտլիկ յաղթապանծութիւն: Բայց անցան դարեր և միջիկ պատմութիւնը կարգարացնէ Հեթումին, որ չէր կարենում տեսանել մութաւոր աչօք, թէ խաղաղութիւն էր մեծ թէ թշուառութիւն, ընդ այլոց ազգաց ջանալ սէր կապել և զազգս մեր բազում խռովութեամբ վրդովել: (էջ. 966):

Ի՞նչ կլինէր այն պետութեան ապագան, որի եկեղեցին բարոյականութեան կրթարանն այն վիճակումն էր, ինչպիսի վիճակում նկարագրւում է յէջն 967: Վիճակահանութիւն կամ շնորհալաճառումն մի կողմից, տգէտ քահանաների բազմանալը միւս կողմից, ժողովուրդը զրկուած ստուցումից և հոգեւոր մխիթարումից և ո՞վ գիտէ, ինչպիսի վիճակի մէջ էր և արբուհիբը, քանի որ ժամանակ չունէր իւր ժողովրդի ցաւերը տեսնելու: Եթէ իւրաքանչիւր պետութեան կամ ազգի անկման նախընթաց է նորա բարոյական անկումը, Ռուբինեանց բարոյական անկման

արմատները նոցա այդ կրօնական գործերի մէջ արած ձեռնմը-
խումների մէջ պէտք է որոնել: Ի՞նչ բարոյական ազդեցութիւն
կարէ ունենալ ժողովրդի չ'րայ եկեղեցին, որի աստուածային
կարգ ու կանոններին ձեռք տալու իրաւունք համարէ իւրեան
ամենայն մի նորընձիւղ և իւրաքանչիւր իրաւատէր: Թագաւորն
իւր շահերին է ծառայեցնում հասարակութեան որբարանը, հո-
գեւորականը այդ սրբարանի մէջ իւր պորան է պարարում, դո-
րանից ի՞նչ պիտի հետևի, եթէ ոչ այն որ «քահանան եղև իբրև
զմի ի ժողովրդենէն», ժողովրդի մօտավուտ կորուստը տեսնելու և
հրճուելու համար: Իսկ ժողովրդականքն ամայիք, թափառականք,
կորդացեալք մօռք, մոլորեալք ի գիտութենէ, զխոտտովանու-
թիւն ոչ գիտեն, զի ոչ են խրատեալ, յեկեղեցի ոչ դիմեն, զի
ոչ են ծանօթացեալ, զաղօթս և զարտասուս ոչ ճանաչեն, վասն
զի ոչ են վարժեալ, ի պատարագ ոչ փափագին, զի ոչ են ուսեալ,
ահա ժողովրդի պառակտուելու սկզբունքները, խոպանացած՝ և
վայրկենականով ապրող՝ հոգիները կարո՞ղ են յարուիլ դէպի ընդ,
հանուրը, հասարակականը, ճշմարիտն և անմահականը: Բարոյա-
կանութեան արմատներով սնունդ չստացողը կարո՞ղ է միանալ
իւր նմանների հետ և զօհել անձնականը հասարակականին: Աս-
տուածայնութիւն իւր մէջ չզգացողը կամ՝ նորա առաջ ծունկ
չխոնարհողը կարէ ոգեւորուիլ յաւիտենականով, կարէ զերծ մը-
նալ յուսահատութիւնից՝ որ ճակատագիրն է ամենայն ժամա-
բոյժի:

Չուկը գլխիցն է հոտում—այդ արդէն սկսել էր Հեթում, երբ
գահից իջնում՝ վանքն էր մօտում, վանքից ելնում՝ գահը բարձ-
րանում... Եւ գորանով պիտի սկսուէր հոգեւորականի անկումը,
ըստ որում բարոյականը խաղք ու խայտառակ պիտի լինէր,
վասն զի գորա պահակը նուիրուածը չէր, բայց ո՞վ էր, տ՞իւ և
ուստի, իշխանք և զօրականք, գասք զինուորաց և այնքիկ որ
և ոչ մօից եկեղեցոյն գոն արժանի... և ինչու էին գոքա իւր-
եանց գործը թողել եկել այնտեղ, որտեղ կոչուած չէին և որ-
տեղից խարազանով պէտք է վռնդուէին. վասն զի «զհոգս իւր-
եանց ի բաց ընկեցեալ, եկեղեցեաւն ջանան տերճանալ, զի յիւր-

եանցն ամօթալի են վասն հեղգութեան. ծածկոյթ և պատրուակ առնեն զայս եսերանաց, զի պարապ ոչ կարեն կալ և գործոց ոչ են բաւական... (էջ. 969—970): Մի խօսքով անկման ընթացքը բաղմակողմանի էր, կարծես թէ դժբախտութիւնն ամենայն կողմից էր գալիս: Պէտք է ուշադրութեամբ կարդալ զորօր. 971¹ էջն, որ պեռ ձեռնպահութեամբ է գրուած, նկատելու համար թէ ինչ ելք ունի այն ձեռնարկութիւնն, որ սխալ քայլի վրայ է հաստատուած:

Բայց շատ չգատապարտենք միայն Հեթումին, վասն զի նա սխալ շարժման ծնունդ է: Ճշմարտութիւնը մի անգամ անուղիղ նպատակի համար գործածելով, առիթ կտանք առ ի շեղ գնալու դէպի անկում: Եկեղեցին չէ կարելի քաղաքական կամ առօրեայ նպատակների և յարմարութիւնների ծառայեցնել, եկեղեցուց չէ կարելի թեթեւամիտ անձնահաճութեամբ օգտուել, եկեղեցու գաւթում չէ կարելի աճաբարութիւններ անել, եթէ այդ եկեղեցին պէտք է ժողովուրդ կրթէ, հասարակութեան բարօրութեան ծառայէ, անհատի կեանքը քաղցրացնէ, ընդհանրութեան բարոյական կրթիչը լինի. ապա թէ ոչ սոսկալի կլինի նորա վրէժխնդրութիւնը թէ գայթաղեցնողներից և թէ նոյն իսկ ամբողջ հասարակութիւնից: Այս աւելի պարզ կտեսնենք, երբ ուշադրութիւն դարձնենք ապա Հեթումի յաջորդների գործունէութեան վրայ: Միայն չմոռանանք առ այժմ, որ նախ՝ այդ նորաձեւութիւնը միայն Նիկիկիայումն էր, և երկրորդ՝ Հեթում գոնէ այս անգամ՝ ուրիշ ձեռնմխումներ չէ արել, այլ բաւականացել է միայն զատիկ կարգադրութեամբ. ուստի և ասուած է. «Եւ էր է՛ որ ի զատիկն իրաւ համարիմք զՅոյնս, զՀռովմայեցիսն, գնալով ընդ նոսա, և ի ծնունդն և ի խմորն և ի ջուրն և յերկու բնութիւն ասելն սուտ առնելով ի բաց կամք». (էջ. 966):

Այժմ մնում է խօսքն այդ ժամանակի քահանայապետների և ապա Հեթումի անտանձ յաջորդների վրայ:

Հեթում պատմիչն իւր ժամանակագրութեան մէջ ասում է ¹⁾

1) Հին գրչագիր մագաղաթեայ մատենագարանի Ս. Էջմիածնի. № 1696:

«Յայսմ՝ ամի (ՌՄՂԲ) եղև մոլորումն զատկի, և հրամանաւ (?) կաթուղիկոսին Տէր-Ստեփաննոսի, արարին ժողով ի քաղաքն Մսիս եպիսկոպոսաց և վարդապետաց, և հարանց վանօրէից, և հրամայեցին առնել զզատիկն ըստ այլ քրիստոնէիցն յապրիլի զօրն, 1) և այլք ի վանօրէիցն Կիլիկեցոց, և ամենայն աշխարհն արեւելից արարին զզատիկն ըստ Հայոց յապրիլի ԺԳ: Ի սոյն ամի սուլտանն Մսրա Աշրաֆն պաշարեաց անթիւ զօրօք զՀայրապետանիստ գղեական Հռոմկլայն, և յետ իս. առուր էառ զնա պատերազմաւ, և գերեաց զՀայրապետն Տէր-Ստեփանոս՝ և զսրբութիւնսն որ անգ էին, և տարեալ զնոյն հայրապետն ի Մսր՝ և ետին ի բանդն Խահրէոյ բերդին, որ և անգ վախճանեցաւ և թաղեցաւ ի նմին բանդի»:

Հեթում իւր պատմութիւնը հասցնում է մինչ 1294 և Անաւարդեցու մասին ոչինչ չէ ասում:

Սմբատ Սպարապետի պատմութեան շարունակողը պատմում է. «Ի թուին 738 (1289/90) մեռաւ լեւոն թագաւոր. և նստաւ իւր որդին պարոն Հեթում և վասն Տէր Կոստանդեայ սուտ վկայս բերեալ ձգեցին յաթոռոյն»:

«Ի թուին 739. դրին կաթուղիկոս զՏէր Ստեփաննոս Հռոմկլայն»:

Ի թուին 841 եկն Աշրաֆ՝ սուլտանն Մսրայ՝ ի վերայ Հռոմկլային շատ զօրօք, և կռուեցաւ ի վերայ բերդին շատ օրեր՝ էառ զնա, և զամենայն ս. մասունսն որ անգ էին, և զաջ ս. Գրիգորի և զկաթուղիկոսն և զեպիսկոպոսքն և զքահանայք և զսարկաւագունք շատք ծառայ տարաւ ի Մսր: Եւ անգ մեռաւ կաթուղիկոսն Տէր Ստեփաննոս: Կարծեմ թէ՛ յանիրաւ իրաւանց եղև վասն Տէր Կոստանդեայ արքայուն. զի այս ամենս վասն նախանձու եղև»:

«Եւ ի սոյն առուրքս..... Եւ դրին կաթուղիկոս զՏէր Գրիգոր»:

Յետոյ պատմում է 748 թուականը յիշելով, որից յետոյ ասում է. «Եւ մեռաւ Տէր Գրիգոր կաթուղիկոս. և դրին զՏէր

1) Գերբուած գրչագրում:

Կոստանդին Կեսարացին¹⁾։ Դորան հետևում է Պիլարդուի ոճ-
րագործութիւնը 756 (1307) թուին։

Ստեփաննոս Օրբելեանը գնում է Հռոմկլայի առումը 741-ին։
Իսկ Անաւարդեցոս գահակալութիւնը 742-ին՝ այսինքն 1293—
1294- և ապա ծռազատիկը «յերկրորդ ամին սորա», ուրեմն ա-
մենավաղը 1294-ին, եթէ ոչ 1295-ին։ Ծռազատիկ մասին Օրբելեա-
նի սխալն այլանդակ է, բայց Անաւարդեցոս գահակալութեան
թուականի մասին ոչինչ չի կարելի ասել։ Յիշում է նոյնպէս որ
1299-ին դեռ կենդանի էր։

Սամուէլ Անեցոս շարունակողն²⁾, որ դատապարտում է Կոս-
տանդին Կեսարացուն՝ հակառակ Օրբելեանին, գնում է Հռոմկլայի
առումը 1295-ին, իսկ Անաւարդեցոս գահակալութիւնը 1296-ին,
որին և գովասանում է։

Սամուէլի շարունակողը միւսերի համեմատութեամբ 2 տարով
առաջ է գնում իւր թուականն, ըստ որում և Անաւարդեցոս
թուականը 2 տարի յետ քաշելով կսաանանք 1294։ Նա տալիս
է Անաւարդեցուն 13 տարի, որ դեռ հաստատ չէ երևում, վասն
զի Սմբատի շարունակողը համաձայն չէ դորան, ուստի կթողնենք
Անաւարդեցոս մահն առայժմ առկախեալ։

Այսպիսով ժ.Գ դարի վերջում, երբ Հեթում Բ. չէ կարենում
այն քաղաքականութիւնն գործ դնել, ինչպիսին իւր նախորդ
Հեթում Ա., անկման մի փոքրիկ քայլ է անում ինքն, որի հետևանք-
ները սխալի տեսնենք ուրիշ անգամ՝ ժ.Գ. դարից յետոյ Ռուբի-
նեանց գործերի մասին (սուելիս 5)։

1) Տպագր. Պարիզ. 1859. էջ. 125—127.

2) Գրչագիր ի մատենադարանիս № 1697. որ շուտով կհրատարակուի.

3) Անցեալ համարի 269 էջում երկրորդ պարբերութիւնը փոքր ինչ
շփոթ է. Այդ մասը պակասում է այլ գրչագրած մէջ, այսինքն «զի ի
նուագեալ ժամանակիս... մինչև որ զհոգս իւրեանց ի բաց ընկեցեալ» ի
փոխանակ հետևեալն է, որ հաւանօրէն նոյն հեղինակից է, «Զի ի նու-
ագեալ ժամանակիս, և ի վերջ եկեալ աւուրցս, պարտ էր զազդոյ վերն
բժշկել, և զայնոսիկ հաստատել բարիս, որ յետ մահու զկնի գայր ստա-

ցողին՝ և անտի կենացն բերէր օգուտ և ոչ զայն սր աստէն մնան յաշ-
հի և ոչ վնասեն ի կատարածի զոչ ունողսն և ոչ օգտեցուցանեն զու-
նողսն։ Բայց քանզի վաղ ժամանակաւ խմորեալ էր սովորութիւնս այս
առ ոմանս և երկայր և զայր բաղում հոգաբարձութեամբ զանխուլ ի
բազմաց, իբր փայլատակումն ինչ՝ ընդ գրուանաւ ինչ նիւթոյ տկարի։

Եւ նախ և զառաջին զայս է ասել եթէ Աստուած սէր է և զսէրն կա-
մի և որ կայ ի սէրն՝ յԱստուած բնակէ և Աստուած ի նմա և լրումն
օրինացն սէր է։ որպէս ասէ երտնելի առաքեալն Պօղոս։ Վասն որոյ և
զամենայն բարեգործութիւնս և զընչից ցրումն և զմարմին յայրումն
տալն ոչինչ գրէ առանց յորդորման սիրոյ և զօգ կատարման և զարդ-
ամենայն բարեաց՝ զսա ցուցանէ և ընդ հաւատոյ և ընդ յուսոյ հա-
մեմատելով մեծ քան զսոսա զսէր՝ ասէ։ Իսկ տէրունական հրամանքն
ի սոյնս յորդորէ զմեզ ասելով. «յայսմ ծանիցեն ամենեքեան եթէ իմ
աշակերտք էք եթէ սիրեցէք զմիմանս»։ Եւ աւետարանիչն Յովհաննէս
ի կաթուղիկէ թղթին՝ հաւասար սիրոյն Աստուծոյ զեղբօրն ցուցանէ
զսէր և ամենայն գիրք աստուածաշունչ ի սոյն զմեզ յորդորեն և դիւ-
րաւ է իմանալ որք զմիտս ունիցին։

Եւ արդ գիտել պարտ է թէ որ սիրոյ արտաքոյ է ամենայն ինչ ըն-
դունայն և ընդվայր է զի զորօր կենդանի առանց զլիսոյ մեռեալ է
այսպէս և այլ ամենայն բարիք առանց սիրոյ ունայն է զի լրումն օրի-
նացն սէրն է որպէս ասէ առաքեալ և սէր ծածկէ զբազմութիւն յան-
ցանաց։ Եւ երանելի աւետարանիչն Յովհաննէս ասէ. «Աստուած սէր է
և որ կայ ի սէրն նորա յԱստուած բնակէ և Աստուած ի նմա բնակէ»։
Այլ և ցաւակցութիւն և կարեկից լինել միմեանց փոյթ յանձին ունել
օգնականութեան ձեռն կարկառել առ ի յարուցանել և զպէտս ընուլ
զկարեացն և զսուգ և տրտմութիւն մխիթարել և սփոփել այսոքիկ և
սոցին նմանք են որ զսիրոյ մեզ յայտ առնեն։ Ի սոյն միտս և Տէրն ասէ
առ մեծատունն. «վաճառեա՛ զոր ունիս և տուր աղքատաց և սնիցիս
գանձս յերկինս։ Քանզի թէ ոչ սիրէ որ զընկերոյ զինչս իւր ոչ ցրէ ի պէտս
նորին։ վասնորոյ և առաքեալն Պօղոս զօգ կատարման զսէրն պատմէ
որով և զարդարուն և գովելի նովիմք զամենայն երկս առաքինութեան
ասէ։ Եւ մեր զայս գիտելով զգաստանալ և զգուշանալ միշտ յամենայն
իրագործութիւնս պարտ և պատշաճ էր և արթուն և զուարթուն լի-
նել յամենայն իրս և ոչ անձնահաճութեամբ և ըստ մարմնաջելոյ լսելեաց
նեւ կուտել վարդապետս զոր առաքեալն Պօղոս հոգք յանձին կալեալ վասն
այսպիսի ախորժական յօժարութեան պախարակէ և զգուշացուցանէ զրե-
ւով առ աշակերտն Տիմոթէոս։ Վասնորոյ զգուշանալ միշտ ամենայն ումեք
պարտ է և ոչ իբրեւ զաչացու զարտուղի ընթանալ ամենայն ուրեք պա-

տուիրանաց Աստուծոյ, նաեւ զի ընութիւն՝ ասի զործ արարչական ի ստեղծուած արարածոց, և ամենայն իր յարարածս ըստ ընութեան վարի, և չէ հնար արարածական ընութեան արտաքոյ վարիլ իւրոյ արարչագիր սահմանին, այլ ըստ կարգելոյ Արարչին անփոփոխելի մնալ միշտ և հանապազ:

Եւ քանզի մարդ անձնիշխան արար Աստուած և ինքն Արարիչն՝ արտաքոյ անձնիշխան կամօք ո՛չ զոք վարէ բռնադատութեամբ, այլ զընտրողութիւն բարւոյ և չարի յանձնիշխանական կամքն և ի բանական իմաստն ապաստան արարեալ, Վասնորոյ և զնոյն, և առաքելոցն տայր պատուէր, բանիւք ողորանք խրատել զհաւատացեալսն և ո՛չ հարկիւ բռնադատել: Որպէս և երանելի առաքեալն Պօղոս զնոյնս երեւի ամենայն ուրեք ի կիրարկեալ, երբեմն ասելով, «Աղաչեմ զձեզ եղբարք գթութեամբքն Աստուծոյ», և երբեմն «գործակից եմ ձեր և աղաչեմ մի ընդունայն զշնորհն Աստուծոյ ընդունել ձեզ»: և արդ ամենայն ուրեք զայս պարտիմք իմանալ և զմտաւ ածել՝ չգնել գայթակղութիւն եղբօրն, «Մի, ասէ Տէրն, կալ հակառակ չարին», այլ և զերկրորդն՝ ասէ, մատո՛ հարկանողին զծնօտ և ընդ միոյ վարողին մղոն՝ կրկին ընթանալ յօժարութեամբ, զի ամենայն ուրեք հաճոյսն Աստուծոյ կատարի և ո՛չ մերն, զի յաղթութիւն չարին բարեան միշտ լինիցի, և յամենայն Աստուած փառաւորեսցի: Իսկ ո՛ր այսմ ամենայնի արտաքոյ ընթանայ և զարտուղի պատուիրանաց Տեառն կոյր է և զաչացու, և «կոյր կուրի յորժամ առաջնորդէ, ասաց Տէրն սխալէ», և յառաջնորդիլն՝ երկոքին խորխորատին լինիցին բաժին: Զի ըստ առակախօսին «սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, և որ հանճարեղն է զառաջնորդութիւն, ասէ, ստացի, և ոչ որ զանձն ընծայեցուցանէ, այլ զոր Աստուած հրաւիրանաւ և ազդեցութեամբ յառաջագոյն ընտրեալ ի շնորհ անդր կոչեսցէ:

Իսկ ի մերումս ժամանակի զոր այժմ տեսանեմք՝ ո՛չ այսպէս, այլ ամենայն ուրեք ընդ դիմակն, առօրեայ իմաստասէրք և ինքնաձեռն աստուածաբանք, իրահամարձակք և խիզախեալք յոչ արժանս, որք զհոգս իւրեանց ի բաց ընկեցեալ, եկեղեցեաւն քանան պերճանալ

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ